

Վերջինս Ե յուրիս .
Օսմանեան եկեղեցիի զորավար (ի-
վա) Սալահեան Ստեփան վաղան Վերջինս
հասա :

Փարիզ 8 յուրիս .
Առևտրական նոր դաշնադրութիւն մը
կնքուեցաւ իտալիոյ հետ :

Երեսու Ռէն Պանը զորվէթը նորէն
ճուրին երեսը հանուելով այսօր Թուլոն
վերադարձաւ :

Լոնտրա 8 յուրիս .
Երեսուիսանաց ժողովին մէջ Սըր ԵՍ-
թաֆֆօրտ Նորթփօթ Սըր Լափսընի պա-
տաւաններով ըսաւ թէ անգղիական նա-
ւատորմին Պէշքըս զրկուելուն պատճառն
այս է որ Պէշքըս կեդրոնական կայան
մէջ , որ զիւրաւ կը հաղորդակցի Բերայի
և Լոնտրայի հետ Ռէնի ժողովական մ'ալ
հարցնելով թէ աւելի լաւ չէ՞ր ըլլար նա-
ւատորմը Սուէի զրկել , Ս. Ս. Նորթփօթ
կրկնեց թէ Սուէի զրկումն չէ , և աւել-
ցուց թէ Սուէի սպասող մեր նաւական
զօրութիւնը աւելցնելու պատճառ մը չը
կայ :

Սըր Վ. Լափսըն վերադառնալով
նաւատորմին Պէշքըս զրկուելուն վրայ ,
սոյն յուրանկարին իրեն ազդարարութիւն
կամ սպառնալիք նկատեց պատերազմող
տէրութեանց միայն կամ միւսին դէմ , և
աւելցուց որ եթէ այսպէս է , Սնդղիոյ
կառավարութիւնը չափի կրնայ յառա-
ջիկայ դէպքերուն գործնականապէս մաս-
նակցել խուսափի :

Ս. Ս. Նորթփօթ ժխտեց նաւատորմին
Պէշքըս զրկուելուն ազդարարական կամ
սպառնական նշանակութիւնն և յայտնեց
վերջապէս թէ կառավարութիւնը կա-
տարեալ չեղբորութիւն պահելու միտա-
դիր է :

Լոնտրա 8 յուրիս .

Փոս. քան.	8 5/8
Փոս. 1865	9
" 1869	8 3/4
" 1871	35 1/2
" 1872	15 1/4
" 1873	8 5/8
" Եղիպոս	41 1/4
Անգլ. քան.	94 5/8

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վեհ. Սուլթանն հինգ շաբաթի օրը
Բանկալիի զինուորական վարժա-
րանն երթալով աշակերտաց քննու-
թեանն ու արդիւն առաջադրութեանը
ներկայ գտնուեցաւ :

Յուսկով կը լսենք թէ Բ. Դրան
հրամանաւ ուրիշ զաւեշտական թեր-
թեանն հետ թատրոնն ալ գոյ-
ուեր է :

Պո. ք. շէն , յունիս 19 թուով գըր-
ւած նամակ մը կը ծանուցանէ թէ
Ռուսաց Ալէքսանդր կայսրը կարողոս
իշխանին բաղձանաց զինաներով հա-
ճութիւն տու եր է որ Ռուսիայի զօր-
քըն ալ աշակցի Ռուսաց . բայց հե-
տե ետ պայմանը դրեր է , Ռուսա-
նիական բանակը ֆոյթաֆաթէն վեց
վարտախ անդին կայա ըսուած տե-
ղէն Դանսըր պիտի անցնի և վիտի-
նի վրայ պիտի քալէ :

Սթամբուլ լրագիրը կարինէն ըս-
տացած նամակէ մ'առնելով կըսէ թէ
Պայէզիտի մէջ պաշարեալ Ռուսական
զօրքն անձնատուր եղեր է : Սակայն
հինգ շաբաթի իրիկուն Բ. Դրան եկած
պաշտօնական հեռագիրը այս լուրը
սուտ կը հանեն՝ աւելցնելով թէ Օս-
մանեան զօրքը դեռ Պայէզիտի պա-
շարու մը կը շարունակէ :

Արգարեւ պատգամուոր մը զըր-
կուեր է պաշարեց որ անձնատուր
ըլլան , բայց անանք իրենց զօրաբա-
նին յաղթուած ըլլալը դեռ չգիտ-
նալով և իրենց օգնութիւն հասնե-
լու յոյս տեսնելով՝ անձնատուութիւն
յանձն չեն տու :

Ռուսոսողէն եկած ճանապարհոր-
դաց և նամակաց խօսքին նայելով ,
Ռուսաց արձակած ռուսները մինչև
60 օրուայ ծանրութիւն ունին :

Նոյն նամակները կը ծանուցանեն
նաե թէ Օսմանեան զօրքերը Դա-
նուրի եզերքը դանաւած հնձոց մէկ
մասը վերուցեր , չկրցածնին ալ այ-
րեր են , որպէս զի Ռուսերը չկրնան
օգուտ քաղել անոնցմէ :

Լա Բիւրբի կը ծանուցանէ թէ
Մէքիէի Շէրիֆը յունիս 24 ին վախ-
ճաներ է :

Լրագրոյ այս աւուր թուոյն մէջ
կը կարդանք թէ հանրածանօթ Հոյ
դերասանուհի տիկին Հր. Գ. . եան
անցեալ շաբաթ իւր ամուսնոյն հետ
Ֆէրի քէօյի կողմէն անցած ժամա-
նակ խումբ մը վայրագ սրիկաներ վը-
րտն յարձակելով խեղճ տիկնոջ պա-
տիւր քաղանարար բռնարարեր էին
Այս բարբարոսական բռնութեան
վրայ տիկին Հր. հիւանդանարով ցա-
ւօք սրտի կըրտնք թէ վախճաներ է :

Հինգ շաբաթի օրը շոր Զէրքէզ
Բէրա գինովաճառի մը խանութը
մտնելով երկու տարճանակ կը նային ,
կը սակարկեն , և մէկ հատին գինը
վճարելով , երկուքը մէկէն կառնուն
կերթնան՝ ըսելով թէ մին արդէն ի-
րենց էր :

Նոյն օրը , կըսէ Դուռիէ , Բէրայի
մեծ ժողովին մէջ քանի մը Զէրքէզ
Պ. Բ. . ի ժամացոյցն ու տակի շըր-
թայն յափշտակելով մեկնեցան :

Կրնայ դիւրաւ երևակայել թէ
մայրաքաղաքիս ամենէն բազմամարդ
վարդներուն մէջ այս յափշտակու-
թիւններն ընդունելը դուրսերն ին-
չե՞ր չեն ընէր :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ

24 յունիս. ուրբաթ իրիկուն	9.29
25 յունիս. շաբաթ առաւոտ	
բացուեցաւ	9.30
ժամ 6 ին	9.31
Բուռն իր երկրորդի	Փր. 24
Փոխադրամ	Վր. 180

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՊՈՑ

Կ. Պոլիս 24 Յունիս	
Ստիկթէ Ժէնէրալի բաժ. Անգլ. լիւր.	2.35
Փոխանակութեան	1.20
Կ. Պոլսոյ Պանքային	2.25
Քրէտի Ժէնէրալ	2.
Քրէտի Օսթրո-Թուրք	
Փոլս. 1863	Ֆր. 50
" 1865	" 51
" 1869	" 46
" 1872	" 15 1/4
" 1873	" 45
Թրամուայ	Օսմ. լիւր. 1 17

ԸՆԹԱՅՔ ԴԵՄԱՌՑ

24 Յունիս	
Անգլ. լիւր	Վր. 109 30
Նարոյն ոսկի	" 87 34
Խիւնիսի Ռուս	" 9 10
Գըրմից	" 34 17
Հինգ Փրանք	"
Հինգ նոց	" 116
Պղինձ	" 179

ԱԶԳԱՅԻՆ

Ս. Պատրիարք հայրն հինգ շաբ-
թի օրն Սպարապետի դուռն երթա-
լով , տէրութեան նախարարաց խոր-
հըրդին ներկայացաւ և ֆիւրտերուն
գործած հարստահարութեանց իս-
պառ տուալքն առնելու միջոցներուն
վրայ երկարօրէն բանակցելով՝ կարե-
ւոր տնօրէնութեանց վերաբերեալ
յուսակց խոստումներ ստացաւ :

Ազգային ժողովոյ դիւտնաց տ-
տնապետներն երէկ Ս. Պատրիարք
հօր տունը գումարուելով , նոր ընտ-
րուելիք Բաղ. ժողովոյ համար հե-
տե ետ զեղչելի ցանկը պատրաստե-
ցին :

1. Արէշ	էֆէնտի	Կիւլպէնէեան
2. Արիկ	"	Ունճեան
3. Ալէքսան	"	Խորասանճեան
4. Աւետիս	"	Հարենյ
5. Բարսեղ	"	Հալաճեան
6. Գեորգ	"	Սթիմարաճեան
7. Եղիա	"	Պէշքըսեան
8. Էնուլք	"	Բուճեան
9. Իսախիկ	"	Հաճեան
10. Կարապետ	"	Հաղարան
11. Կարապետ	"	Մեծատուրեան
12. Մատթէոս	"	Ալէքսանեան
13. Միքայէլ	"	Մոմճեան
14. Միկայիլ	"	Մուրատեան
15. Միկայիլ	"	Ֆրէնկեան
16. Յակոբ	"	Մարալ
17. Գարութիւն	"	Մանուկեան
18. Յօհաննէս պէյ Պ.	"	Տատեան
19. Նիկողոս էֆէնտի	"	Սուրխանեան
20. Պետրոս	"	Միլիտանեան
21. Պոլոս	"	Ճամակչեան
22. Ռուբէն	"	Գրիգորեան
23. Սեննքերիմ	"	Մանուկեան
24. Տեգրան	"	Գարակչօղեան
25. Տիգրան	"	Կիւմիլչեան
26. Տիգրան	"	Փէշիմարճեան
27. Տրդատ	"	Փափուզեան
28. Փիլիպոս	"	Մուրատեան

ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Ազնիւ Մասիս .

Ազգ. ժողովոյ արաքը քննադատող
նամակներս անկողմնակալութեամբ հրա-
տարակելուէ համար կը փութամ շնոր-
հակալքս յայտնել ձեզ :

Եւ որովհետեւ քննադատութեանցս ա-
ռարկայն զուտ ազգային է , ուստի պատ-
շաճ կը դատուի՝ Հայկական Նամակներ
անունը տալ գրուածոցս :

Յատենի Ազգ. ժողովոյ Ստեփան փա-
շայի խօսածներն առ այժմ միայն քննա-
դատութեան առարկայ ընելէս ունեք թե-
րեւ երթալէն թէ Ն. Վսեմութեան խօս-
քերուն խիստ մեծ կարեւորութիւն կըն-
ծայեն :

Այո , փասն զի Ստեփան փաշա իւր
նրամաղթեամբն ու ճարտարաստութեամբ
ըն նշանակութեան արժանի երեսփոխան
ներէն մին է , որ դիտակցութեամբ կը
շարժի , դիտակցութեամբ կը գործէ , զի-
տակցութեամբ կը խօսի , և իւր մէջ մի
բառերը նպատակի մը կը ծառայեն . հե-
տեաբար կարծէ որ մեծ կարեւորութիւն
ընծայենք անոր տոնեարանութեանց ,
Շարունակներ :

Ի պատասխան սոսմանադրական դի-
տողութեանց Բաղ. ժողովոյ՝ Ն. Վսեմու-
թիւնը կըսէ . « Առ այժմ օրէնք ունինք
որ 75 դր թուրք տարու կարողութիւն ու-
նեցողը քուէ պիտի ապ , զայն հրատա-
տարակելու և ապագային ճշգիւ գործա-
ղըրութեան պատուէր կուտանք Վարչու-
թեան , այդ բաւական է » Տես Նիստ
Բ. 1877 ամի էլ 47 երես երկրորդ :

Ներուի մեզ ըսել թէ հոս երկու խա-
բէական ձեւ կայ :

Ա. Սոսմանադրութեան 63 ռդ յօդ-
ւածը կըսէ . « Ընտրողական իրաւանց հիմն
կը բաժնին ազգային տուրքն և անձնա-
կան արժանիքը : Ազգային տուրքը ընտր-
ութեան իրաւունք տալու համար պէտք
է որ ընտրող տարին գոնէ եօթնամա-
սունէնինք զը ընդհանուր տուրք վճարէ »

Ինչպէս կերեալ , 63 ռդ յօդուածին
արամադրութիւնը բացորոշ է , այնպէս որ
ընաւ մեկնութիւն չվերցնելու հետեւարար
Ն. Վսեմութեան ըսածին և Սոսմանադ-
րութեան յիշեալ յօդուածին մէջ անհուն
տարբերութիւն կայ , և այդ տարբերու-
թիւնը չդիտող մէկը չէ Ստեփան փա-
շան , մանաւանդ որ Սոսմանադրութեան
խոխադիր յանձնաժողովոյ անդամներէն
մին է . ուստի նոր է իւր յարուցած խըն-
դիւրը , զոր իրեն առաջարկութիւն կրնար
ներկայել : Մարդ մը կրնայ մեծ կարու-
ղութիւն ունենալ , և իւր ազդին բնաւ
տուրք չվճարել . ուրիշ մ'ալ թէ պէտ կա-
րողութիւն չունի , բայց խնայողութեամբ
ապրելով կը յօժարի առ ազնիւ իւր պարտ-
քը վճարել : Արդ՝ եթէ Ստեփան փաշայի
ըսածն ընդունինք , այն տուն կարողու-
թիւն ունեցող բայց բնաւ տուրք չվճա-
րող քուէ արկունք պիտի ունենայ ազգը :

Ն. Վսեմութեան այս ըսածին մէջ ըս-
կըզբան կէտ մը կայ , որ ազնուապետա-
կան դրութեան կը յանդի , այն է բուէի

մասնակցողին վրայ նիւթալաւ կարողու-
թիւն փնտռել :

Ն. Վսեմութեան այս ըսածն ոչ մի-
այն հակառակ է Սոսմանադրութեան 65
րդ յօդուածին , այլ և ազդին ընդունած
հաւասարութեան սկզբան :

Բ. « Զայն հրատարակելու և ապագա-
յին ճշգիւ գործադրութեան պատուէր
կուտանք Վարչութեան » կըսէ Ն. Վսե-
մութիւնը :

Ներուի մեզ դիտել տալ թէ օրինօք
ընդունուած և գործադրութեան գրուած
արամադրութեան մը չափանիւրիւր տա-
լիք պատուէրն ու ընդլիք հրատարակու-
թիւնը :

Հրաժարեալ Բաղ. ժողովը տարույս
մայիս 17 ծանօթագրին եզրակացութեա-
նը մէջ կըսէ « Բաղ. ժողովն ներկայ ծա-
նօթագրին մէջ զայս և եթ յաւելցնել
պարտ կը համարի թէ » այն թաղերէն , ո-
րոց երեսփոխանական ընտրողաց թիւը
բաղմամբաւորուած ըլլալու մասին բողոք
և դիտողութիւններ կան , Ազգ. տրոց
բաղմամբ ցուցակները թէ և քանիցս պա-
հանուած՝ սակայն տակաւին հասած չը-
լալով , չէ հասկցուած թէ նոյն թաղերուն
ընտրութեանց մասնակցողներն ըստ 63 ռդ
յօդուածոյ սոսմանադրութեան ընտրու-
ղութեան հիմնուած 75 դր թուրք
յանձնաւոր է են տալ թէ ոչ : Ուստի Բաղ.
ժողովս այս կէտին վրայ մասնաւորապէս
Ազգ. ժողովոյ ուղղութիւնը հրաւի-
րելով՝ բաւական կը համարի իւր կողմէն
դիտել տալ և եթ որ Սոսմանադրութեան
յիշեալ յօդուածին ճշգրիտ գործադրու-
թեամբ՝ ոչ միայն օրինական զեղծմանց՝
այլ և Կեդրոնական սնտուկին պատահե-
լիք վնասուեց առնին ստեղծուած կրնայ ը-
լալ » : Տես Նիստ Բ. 1877 ամի էլ 28
երես երկրորդ :

Հրաժարեալ Բաղ. ժողովն իւր ծա-
նօթագրին եզրակացութեանը մէջ սոյն
խօսքերն ընելով , դիտել կուտայ թէ՛

Ս. Մէկ քանի տեղեկագրաց յետեւ
ձեզման պատճառն ընտրելու և ընտրու-
եաց 75 դր տարեկան տուրք վճարող
ըլլան ստուգելու նպատակաւ է , զոր
քննելն ըստ օրինի վարչութեան կը պատ-
կանի , և Բ. եթէ այս կէտին ուղղութե-
ան չընծայուի , թէ՛ օրէնքը կեղծանի
և թէ՛ Կեդրոնական սնտուկին մեծ վնաս
կը հասնի , ըստ որում , ներկայ օրինաց
արամադրութեամբ՝ նորա հաստիքից գըլ-
խաւոր ազդիւրն է 75 դր թուրք տարեկան
տուրքը :

Ինչ պէտք էր պատասխանել Վար-
չութեան սոյն դիտողութեանցը .— տես-
նենք ինչ կըսէ Ստեփան փաշան .— « Վար-
չութեան առաջարկութիւնն որչափ կա-
րեոր՝ այնքան ծանր է , առանց դիւան
ունենալու (Մայր դիւանի համար կըսէ)
ստանի ծանր խնդրոյ մը վրայ չենք կրնար
խօսիլ , պէտք է որ դիւանին կազմուելէ
ետեւ այսպիսի խնդիրներ ներկայացուին »

Ներուի մեզ ըսել թէ վարչութիւնն
առաջարկութիւն չէ ներկայացուցեր , այլ
յետաճգուած ընտրական տեղեկագրոց
նկատմամբ սոսմանադրական դիտողու-
թիւններ , նկատել տալով , որ օրինական
պայմաններէ զուրկ տեղեկագրերն եթէ
Ազգ. ժողովը վաւերացնէ , թէ՛ գործը-
ւած զեղծումը քաջաբերած կըլլայ և թէ
Կեդրոնական սնտուկին հաստիքից սպառ-
ման պատճառ :

Ուստի փոխանակ խնդրոյն բնութենէն
տարբեր կէտեր մէջ բերելով գործուած
զեղծմանց անուղղակի պաշտպան և փա-
տարան կանգնելու , անկեղծութեամբ և
օրինասիրութեամբ վարուած կըլլար Ն.
Վսեմութիւնն , եթէ հետեւեալ առաջար-
կութիւնն ընէր . « Այդ ցուլով որ Ազգ. ժո-
ղովս ընտրեալ վարչութեան հրահանգին
համեմատ Թաղ. խորհուրդներէն ունեք
տակաւին յապաղած են տրոց բաղմամբ
ցուցակները պատրաստել , որով Ազգային
գործոց արդեւ եղած են . ուստի կա-
ռաջարկեմ որ մինչև յառաջիկայ նիստ վար-
չութիւնն իր քննութիւնը կատարելով տե-
ղեկագիր բերէ ժողովոյս , որ երբ տեսնէ
թէ ըստ օրինի քուէի մասնակցելու իրա-
ւունք չունեցող անանց մասնակցութեամբ
ընտրութիւն կատարուեր է , ի խրատ և
ի զղուշութիւն ապագայ ընտրութեանց
մերժէ և պահանջէ նոյն պարտականց Թաղ.
խորհուրդներէն որ ըստ օրինի ընտրու-
թիւն կատարեն մինչև 15 օր , և եթէ

